

**Բ. Խ. ՄԵԺՈՒՆՑ**

Գրաբարից աշխարհաբարին անցման ժամանակաշրջանում հայոց լեզուն ենթարկվել է գզալի փոփոխությունների, որոնք առավել շահով ընդգրկվել են քերականական կարգերով հարուստ գոյական և բայ խոսքի մասերը՝ խախտելով նրանց կառուցվածքը և ձևախմբատային կազմը: Առաջին դեպքում նկատելի է թեքականության խիստ նվազում, վերլուծական կառուցվածքի հաստատում աշխարհաբարի զրական տարբերակներում, առավել ևս բարբառներում: Զևախմբատային փոփոխությունները, որ ակնհայտորեն տարածվում են նաև գոյականի թվի կազմության վրա, ընթացել են մի շարք ուղղություններով. ա) քերականական ձևի իմաստագրվում (է, ան+է կառուցվածքով աննզականների եզականացում), բ) անփոփոխ քերականական իմաստի նոր ձևավորում (է հոգնակերտի փոխարեն -եր<եար, -ներ<նեար վերջավորությունների գործածություն), գ) նորաձև հոգնակիակազմության օրինակաչափության ընդհանրացման պատճառով հնաձև կազմությունների անհետացում: Այսպես, աշխարհաբար լեզվի գրական և խոսակցական տարբերակները շժառանգեցին հին հայերենի սեռական հիմքով հոգնակիի արտահայտության ձևերը, մինչդեռ գրաբարում դրանք զգալի թիվ էին կազմում (ազն-ազին-ազինք, անձն-անձին-անձինք, աստղ-աստեղ-աստեղք, արկղ-արկեղ-արկեղք, տարր-տարեր-տարերք, դուստր-դուտեր-դուտերք, եզր-եզեր-եզերք):

Այս ընդհանուր դիտողություններով բնավ չի սպառվում գոյականի թվակազմության պատկերը, իրականում հոգնակիի և ոչ եզականական քերականական կարգերի ձևավորման գործընթացը հանդես է բերում բազմաթիվ օրինակաչափություններ, որոնք հաստատվում են թե՛ հին հայերենի և թե՛ աշխարհաբար գրական լեզուների ու բարբառների փաստերով: Ստորև փորձենք մեր ասածը հիմնավորել մի քանի համակարգային դրսևորումներով:

Թեև աշխարհաբար գրական հայերենների համեմատությամբ գրաբարի ընդհանրացված է աննզականակերտ-հոգնակերտը առավել տարածում ունի բարբառներում, այնուամենայնիվ նրա կիրառական ոլորտները այստեղ և սահմանափակվել են՝ ընդգրկելով բառերի առանձին շարքեր: Նման տեղաշարժերը, սակայն, շժանդեցրին իշխալ բեր կանական կարգերի վերացման, այլ է հոգնակերտին փոխարինեցին -եր, -ներ և այլ մասնիկներ, որոնց համար գրաբարյան շրջանից մեղ են հասել առանձին օրինակներ միայն, այն էլ ոչ թե հոգնակիի, այլ հավելք կանության իմաստով: Այնպես որ, ժամանակակից գրական հայերեններն ու բարբառները հոգնակիի կազմությամբ զգալիորեն հեռացել են գրաբարից. այստեղ օգտագործվում են այլ կանոններ, գործածվում նոր մասնիկներ, իսկ է հոգնակերտով կազմությունները դիտվում են իբրև հնագույն դրսևորումներ:

Հնաձև թվակազմությունից նորաձևին անցումը պայմանավորում է լեզվի զարգացման բնական ընթացքը, իսկ միևնույն իմաստն արտահայտող քերա-

կանական տարբեր ձևերից մեկի ընտրությունը, բնականաբար, պետք է ունենար ինչ-ինչ առավելություններ կամ հաստատվելու հնարավորություններ դրսևորելու մյուսի համեմատությամբ, այլապես հնարավոր չէր լինի հիմնավորել նորի հաղթանակը: Իսկ որո՞նք են այն առավելությունները, որոնցով -եաբ, -նեաբ մասնիկները հաստատվեցին աշխարհաբարի տարբերակներում՝ միայն նվազագույն հնարավորություններ թողնելով է հոգնակերտին: Այժմ փորձենք հիմնավորել դրանք հայ լեզվաբանների կողմից արված դիտողություններով ու առկա լեզվական փաստերով: Ամենից առաջ հիշատակենք Չ. Աճառյանի կարծիքը. «Դրաբարի հոգնակիի գրությունն զժվարությունները շատ էին. մի կողմից է, ս, ց հոգնակերտ նշանները, մյուս կողմից վերջինիս սաացած -աց, -ից, -ոց, -ուց ձևերը, առանց որոշ կանոնի, պատճառ եղան, որ հավաքականը գար նրանց տեղերը դրավելու»: Եթե միակ ելակետը ընդունենք հոգնակիի արտահայտման բաղմածկությունները, ապա զժվար չէ նկատել, որ միջին հայերենում, առավել ևս հայերենի բարբառներում ավելի մեծ թիվ են կազմում հոգնակերտ մասնիկներն ու դրանց ձևափոխությունները, ուստի այս մեկնաբանությունը ամբողջական և սպառիչ չի կարելի համարել նոր հոգնակերտների աշխուժացման և հիմնավորման համար: Անշուշտ, կարևոր դեր են խաղացել այլ գործոններ ևս, որոնցից հարկ ենք համարում ներկայացնել հետևյալները.

Առաջին՝ գրաբարի ձևավորման և արապետման շրջանում գոյություն ուներ ժողովրդախոսակցական լեզու, ուր հավաքականակերտ մասնիկներն ավելի հաճախ էին հանդես գալիս, քան գրական տարբարակում էր. «Արդեն Դ և Ծ դարեն կար այս կերպ հոգնակի այ (հավանաբար ընտանեկան լեզվի մեջ ավելի հաճախ) -վան-եաբ, վանքեր, էշ-եաբ, էշեր, քաղախ-նեաբ, փոքր քաղաքներ»<sup>2</sup>: Եվ բացառված չէ, որ այդ մասնիկներն արտահայտում էին ոչ միայն հավաքականություն, այլև՝ հոգնակիություն իսկ: Հավանաբար խոսակցությունում միևնույն բառի համար կային է-ով և -եաբ, -նեաբ ու այլ մասնիկներով հոգնակիի զուգահեռ ձևեր. գրաբարի տըբարպետման շրջանում գործուն էին է-ով հոգնակիները, իսկ նրա անկումից հետո ակտիվ գործածություն ստացան մյուս մասնիկներով կազմությունները:

Երկրորդ՝ որպես փաստական կարևոր գործոն մեզ հիմք է տալիս է հոգնակերտը՝ իր արտահայտությամբ, իմաստազրկվելու և զուգորդվելու հատկություններով: Բանն այն է, որ է-ն, որպես անեզականակերտ-հոգնակերտ, իր կազմում շունենալով ձայնավորական տարր, դրսևորում է այնպիսի հատկություններ, որոնցով հաճախ կորցնում է քերականական անկախ միավորի իր դերը, հաստատվում բառի հնչյունակազմում, իսկ -եբ, -նեբ մասնիկներն իրենց ձայնավորական տարրի շնորհիվ դառնում են շեշտակիր, վանկային միավորներ՝ դրանով հանդերձ պահպանելով քերականական այն իմաստը, որով հաստատվել են լեզվում: Այս վերջին դրսևորումները մեզ հիմք են տալիս կատարելու հետևյալ դիտարկումները.

1. Կինելով լոկ բաղաձայնական տարր՝ է անեզականակերտ-հոգնակերտը հեշտությամբ ձուլվում է բառարմատին, կորցնում իր քերականական իմաստը: Իմաստազրկման այս երևույթը նկատելի էր դեռևս գրաբարում. «Անեզականների բառային վերակազմավորումները ևս սկսվում են այս շրջանից (գրաբարի), որ երևում է, օրինակ, օրէնք, արդյունք, շնորհք, շէնք և նման մի քանի բառերի անեզական գաղափարի մթագնումից»<sup>3</sup>: Հայոց լեզվի զար-

<sup>1</sup> Չ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Բ. 3, Եր., 1957, էջ 532:

<sup>2</sup> Ա. Այսերճյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 5:

<sup>3</sup> Չ. Այսերճյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972, էջ 428:

կացմանը համընթաց անեզականների եզականացման այս գործընթացը շարունակվեց ու վերջնական ավարտին հասավ աշխարհաբար գրական տարբերակներում և բարբառներում: Այնպես որ համաժամանակյա քննությունը հնարավոր չէ Ի-ի, որպես քերականական անկախ միավորի, առանձնացումը հետևյալ բառերում՝ աղոթք, անեծք, աչք, արևելք, արևմուտք, բարք, բերք, գրնացք, դժոխք, թոխք, խելք, խոսք, խնջույք, կամք, կառք, կյանք, կմախք, հմայք, հրաչք, ձեռք, մեղք, մեջք, միտք, նզովք, շնորհք, ոտք, պարտք, ստինք, սրունք, տիեզերք, ցնորք, ցուք, ուշք, փողք, օրենք ևն: Դեռ ավելին, հայերենի մի շարք բարբառներում (Արցախ, Ագուլիս, Արեշ, Գորիս, Կաքավաբերդ, Մեղրի, Ուրմիա) անեզականի քննությունը ենթարկվել է հնչյունափոխանական այն օրինաչափությանը, ինչ որ նրան նախորդող բաղաձայնը. այնպես որ հիշյալ բարբառների համար սովորական է Ի-ի ապաշնչեղացված արտասանությունը՝ աղօտկ, անիսկ/անէսկ, աշկ, մէշկ, մէխկ, փօխկ ևն: Բնականաբար, ինչպես աշխարհաբար գրական հայերեններում, առավել ևս բարբառներում բառարմատին միաձուլված երբեմնի քերականական իմաստակիր մասնիկի առանձնացումը հնարավոր է միայն պատմահամեմատական քննության դեպքում:

2. Անեզականակերտ-հոգնակերտ քննության համար բնորոշ է նաև զուգորդվելու հատկությունը: Չնայած Ի-ով զուգորդումները մեծ թիվ էին կազմում միջին հայերենում և բազմապատկվել են բարբառներում, սակայն նրման կազմությունների գոյությունը կարելի է ընդունել դեռևս գրաբարյան շրջանից. «... իբրև բաղաձայնական տարր սա «իրեն է ձգում» հիմքավերջի ձայնավորահանգը կամ ձայնավորում ունեցող հանգը. սրանով էլ պայմանավորված է անհ, ունհ, ինհ, ուհ, իհ, էհ և այլ նման տարրերի գոյացումը»<sup>4</sup>: Ի դեպ, գրաբարյան շրջանում Ի-ով զուգորդումները առավելապես զգալի են ոչ թե արմատական վերջնաբաղադրիչ ձայնավորի, այլ հիմքակազմ ձայնավորական տարր ունեցող ձևայինների հետ: Թեև այդ շրջանի համար հնարավոր է ընդունել դեռ ձևավորվող կամ թույլ անջատվածություն բազմաթիվ կազմություններ (իչհ, իհ, կունհ), սակայն ավելի ակնառու են ածանցական ունհ+հ, և վերջնահնչյունով ձայնավորում ստացած ունհ+հ և անեզականություն արտահայտող անհ+հ զուգորդումները: Այսպիսով, գրաբարյան շրջանում Ի վերջավորության կողքին հոգնակիություն և անեզականություն էին արտահայտում նաև մունհ (բորբոք-մունհ, երդ-մունհ, զբաղ-մունհ), ունհ (աղեղ-ունհ, գագաթ-ունհ, կայծակ-ունհ, ակ-ունհ, որդ-ունհ), անհ (անարգ-անհ, բամբաս-անհ, զարգար-անհ) զուգորդական մասնիկները:

Նշվածներից բացի, այդ շրջանի համար ընդունելի են հավաքականակերտ +հ կառուցածևով զուգորդումները՝ ականհ+հ (զօր-ականհ), անհ+հ (իշ-անհ, ձի-անհ), անի+հ (աւագ-անիհ, երից-անիհ), եայ+հ (վան-եայհ), որայ/որեայ+հ (արտ-որայհ/արտ-որեայհ, վան-որայհ/վան-որեայհ): Առաջինների համեմատությամբ այս ձևերը առանձնանում են յուրահատուկ կառուցվածքով և կիրառությամբ: Այսպես, ի տարբերություն նախորդ զուգորդումների, այս կառուցածև կազմող բաղադրիչներից յուրաքանչյուրը քերականական իմաստակիր միավոր է և եզակի թվակարգի հետ ստեղծում է եռանդամ հակադրություն՝ աւագ-աւագանի-աւագանիհ, ձի-ձիան-ձիանհ ևն: Մի կարևոր հանգամանք ևս: Չնայած այս կառուցածևը չհիմնավորվեց աշխարհաբար գրական լեզուներում, սակայն հայերենի բարբառներում այն դարձավ ամենագործածականը ու հիմնականը, առաջ բերեց բազմաթիվ զուգորդումներ՝ կարծես դրանով իսկ հաստատելով, որ նման կազմությունները նախապես էլ ժողովրդախոսակցական լեզվին հատուկ երևույթներ են եղել:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 429—430:

3. Ք հոգնակերտի գործածության սահմանափակման պատճառներից մեկն էլ, թերևս, նրա դժվար արտասանությունն էր երկու և ավելի բաղաձայններով հանգող բառերի վերջում: Որպես լավագույն վկայություն կարելի է հիշատակել սեռական հիմքով հոգնակիի այն ձևերը, որոնք, այնքան հարազատ լինելով գրաբարին, չփոխանցվեցին աշխարհաբար լեզուներին, ինչպես՝ ազն-ազին-ազինեմ, անձն-անձին-անձինեմ, բռն-բռին-բռինեմ, անգղ-անգղեմ-անգղեմ, աստղ-աստղեմ-աստղեմ, արկղ-արկղեմ-արկղեմ, եզր-եզեր-եզերեմ, ոսկեր-ոսկեր-ոսկերեմ, վաղը-վաղեր-վաղերեմ ևն: Այս դեպքում վերջնահանգ բաղաձայնից առաջ թույլ լսվող ը ձայնավորը բաղաձայնների հստակ առանձնացում չի կատարում, մանավանդ նրա արտասանությունը նվազում կամ բոլորովին վերանում է, երբ բառին ավելանում են նոր մասնիկներ (անձնական, աստղային, ոսկրոտ): Ձայնի խլացման երևույթը առավելագույն չափի կհասնեն բաղաձայնական տարրի ավելացումով, այսինքն Բ-ով հոգնակի կազմության ժամանակ, որի հետևանքով իրար մոտ գտնվող երեք և ավելի բաղաձայնները առաջ կբերեն արտասանական դժվարություն, թերևս՝ նաև անհնարիություն:

4. Ք հոգնակերտի՝ ձայնավորական տարրի հետ զուգորդվելու հատկությունը հստակորեն բացահայտվում է հայերենի բարբառներում: Ինչպես հայտնի է, բարբառների մեծագույն մասում գործում է մի ընդհանուր օրինաչափություն, ըստ որի Բ դրվում է ձայնավորահանգ, իսկ մյուս մասնիկները՝ բաղաձայնահանգ բառերի վրա: Հենց դրանով էլ պայմանավորվում է հնաձև և նորաձև հոգնակիակազմության օրենքը, շնայած որ Բ հոգնակերտի կիրառության ոլորտը աստիճանաբար նվազում է: Այնպես որ, հայերենի շատ բարբառների համար դեռևս սովորական են գինի՛մ, որդի՛մ, տղա՛մ/տղէ՛մ, փեսա՛մ//փեսէ՛մ, կատու՛մ//կատվէ՛մ հոգնակիի ձևերը:

Այսպիսով, ամփոփելով վերոհիշյալ դիտողությունները, կարելի է հանգել հետևյալ եզրակացության: Ք անեզականակերտ-հոգնակերտը, լինելով միայն բաղաձայնական տարր, դեռևս գրաբարյան շրջանում ոչ միշտ է պահպանել իր՝ անկախ, ինքնուրույն քերականական միավորի դերը. այն, մասամբ միավորվելով բառարմատին, իմաստազրկվել է, իսկ ավելի հաճախ դրսևորել է զուգորդվելու հատկություն, միավորվել բառի վերջնահանգ ձայնավորին կամ ձայնավորական տարր ունեցող ձևույթներին, անկախ նրանից, թե այդ հնչյունն ու հնչյունաիմբերը ուղղական կամ սեռական հոլովով են հանդես գալիս: Այս հատկությունների պատճառով էլ աստիճանաբար սահմանափակվել են նրա դիրքային հնարավորությունները, իսկ աշխարհաբարի կազմավորման ու հաստատման շրջանում իր տեղը դիջել է շեշտակիր ձայնավորական տարրի առկայության շնորհիվ քերականորեն անկախ միավոր առանձնացվող -եւ<եար, -եւեւ<նեար վերջավորություններին:

Հին հայերենի Բ անեզականակերտ-հոգնակերտը և նրանով բաղադրված զուգորդումները աշխարհաբար գրական լեզուներում ու բարբառներում հանդես բերեցին և՛ ընդհանուր, և՛ յուրահատուկ դրսևորումներ: Մի կողմից՝ աշխարհաբարի և ոչ մի տարբերակում անեզականները չպահպանվեցին իրենց բուն նշանակությամբ. դրանք կա՛մ քերականորեն իմաստազրկվեցին (աղոթ՛եմ, աճե՛ծեմ, մեղ՛եմ, միտ՛եմ), կա՛մ գործածվեցին վերաիմաստավորված բառակազմական ձևույթով (աշխատաճեմ, անարգաճեմ, բամբասաճեմ, զարդարաճեմ, զբոսաճեմ): Մյուս կողմից՝ գրական լեզուները ժառանգեցին հավաքականություն արտահայտող Բ-ով առանձին զուգորդումներ միայն (աճեմ, ուճեմ, եճեմ), իսկ Բ հոգնակերտը համարյա դուրս մղվեց և փոխարինվեց նոր մասնիկներով (երևույթը ընդգրկում է նաև -ցի վերջածանցով բառերը): Այլ է վիճակը բարբառներում: Հոգնակիի կազմության համար բարբառների մեծագույն մաս-

սում առաջ եկավ մի ուրույն օրինաչափություն, ըստ որի ձայնավորահանգ բառերը սովորաբար ընդունում են Կ հոգնակերտը (հնաձև հոգնակիակազմություն), իսկ բաղաձայնահանգ բառերը՝ -եք, -նեք ևն մասնիկները (նորաձև հոգնակիակազմություն): Այս կետերը, սակայն, ընդհանուր դարձավ ի ձայնավորով վերջացող բառերի համար, իսկ վերջնահանգ ձայնավորներով մյուս բառերի հոգնակին կազմվում է և՛ Կ-ով, և՛ նրանով բաղադրված գանազան զուգորդումներով՝ պայմանավորված բարբուռային խմբակցություններով: Այսպես, օրինակ, արևմտահայ մի շարք բարբառներում Կ հոգնակերտ են ստանում ա, ու ձայնավորներով վերջացող բառերը (տղախ, կատուխ), մինչդեռ բարբառների արևելահայ խմբակցությունը այդ բառերի համար սովորաբար գործածում է ձայնավորում ստացած է՛ք մասնիկը (տղէ՛ք, կատու՛ք): Իհարկե, սրանով շին սահմանափակվում հնաձև հոգնակիակազմության դրսևորումները, բարբառներում Կ հոգնակերտը շարունակում է պահպանվել այլ դիրքերում ևս՝ թե՛ որպես ինքնուրույն քերականական միավոր և թե՛ որպես զուգորդումների բաղադրիչ տարր: Ճիշտ է, գրաբարյան զուգորդումները շժառանգվեցին նույնությամբ, սակայն հնի օրինակով կազմավորվեցին և լայն տարածում գտան բազմաթիվ նոր բաղադրություններ, որոնք արտահայտում են և՛ հոգնակիի, և՛ հավաքականության իմաստ: Դեռ ավելին, բարբառներում Կ-ի բաղադրվելու հնարավորությունները մեծացան՝ ձայնավորական տարր ունեցող և զուգորդվող հատկությամբ այլ մասնիկների առկայության և տարբեր դիրքերում նրա, որպես բաղադրիչ մասի, հանդես գալու պատճառով: Այսպես, եթե գրաբարյան շրջանի զուգորդումներում Կ միշտ կցվում էր վերջից, ապա բարբառներում այն կարող է լինել և՛ նախաբաղադրիչ, և՛ վերջնաբաղադրիչ: Չնայած բարբառներում գործածվում են տարբեր կարգի զուգորդումներ, այնուամենայնիվ դրանց բաղադրիչների կցումը կատարվում է որոշակի կառուցվածքներով: Այսպես, նախաբաղադրիչ Կ-ի համար զանազանվում են Կ+հոգնակեքտ, Կ+հավաքականակեքտ+հոգնակեքտ կառուցածները, ընդ որում, առաջինը կցվում է միայն բաղաձայնահանգ, իսկ երկրորդը՝ և՛ բաղաձայնահանգ, և՛ ձայնավորահանգ բառերի՝ Կ՛ր/Կ՛ր/Կ՛ր (ամանք՛եր, ախճիք՛եր, պվեք՛իր), Կե՛ք (խօկիհյտե՛ք, ճամբախ՛յտե՛ք (Վան, Ուրմիա):

Վերջնաբաղադրիչ Կ մասնիկը կիրառական մեծ ոլորտ ունի. այն կարող է զուգորդվել ինչպես բառի վերջնահանգ ձայնավորային բաղադրություններին, այնպես էլ երկակիակերտ, հավաքականակերտ, հոգնակերտ մասնիկներին: Թուր կարգի վերջնահանգ ձայնավորային բաղադրությամբ զուգորդումներն ունեն իմաստային որոշակիություն, արտահայտում են հավաքականություն կամ հոգնակիություն: Այդպես են, օրինակ, և հավելականով անեզական հավաքականակերտ զուգորդական մասնիկները, որոնք, գործածություն ունենալով հայերենի բոլոր տարբերակներում, առավել տարածում ըստացան բարբառներում (Վարդանանք, Թոխունք, Դավենք, պապունք): Չայնավորային բաղադրությամբ մյուս զուգորդումը է՛ք հոգնակերտն է, որը սովորաբար գործածվում է արևելահայ ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում: Հայագիտության մեջ նրա առաջացումը դիտարկվում է ոչ միատեսակ մոտեցումով: Համաժամանակյա քննությամբ նրա ձայնավորումը բացատրվում է բառի վերջնահանգ ա հնչյունի և Կ հոգնակերտի կցումով, իսկ ավելի հավանական ու ընդունելի պատմական քննությունն է, ընդ որում, հաշվի պետք է առնել, որ նախապես տեղի է ունեցել Կ հոգնակերտի սերտաճում բառարմատին, այնուհետև՝ երկբարբառի պարզեցում նախաբաղաձայնական դիրքում (աղ-այք>տղ-էք, սստանայք>սատնէք, փես-այք>փես-էք):

նշված դիրքում երկբարբառների պարզեցումը օրինաչափ է հայերենի բարբառների համար. այն տարածվում է ոչ միայն այ, այլև՝ աւ, իւ, ոյ և այլ կապակցութիւնների վրա (այս>էս, մայր>մէր, լոյս>լուս, քոյր>քիւր, ձիւն>ձուն, սիւն>սին):

Վերջնաբաղադրիչ Բ մասնիկով մյուս կարգի ոչ բոլոր զուգորդումներն են, որ զանազանվում են որոշակի քերականական իմաստով: Այդ բազմիմաստութեան հիմնական պատճառը տարածքային առանձնահատկութիւնն է. այսպես, միևնույն զուգորդումը մի բարբառում կարող է արտահայտել հավաքականութիւն, իսկ մյուսում՝ և՛ հավաքականութիւն, և՛ հոգնակիութիւն: Զուգորդումներն ունեն կառուցվածքային և իմաստային այլ դրսևորումներ ևս: Թեև բարբառագիտական ուսումնասիրութիւններում վկայված են չորս և ավելի բաղադրիչներով կառուցածներ, սակայն ավելի գործածական են երկբաղադրիչներն ու եռաբաղադրիչները: Իմաստային առումով գերակշիռ թիվ են կազմում տարիմաստ բաղադրիչներով զուգորդումները, շնայած հանդիպում են նաև նույնիմաստ բաղադրիչներով կազմութիւններ: Մենիմաստների համար թերևս կարելի է առանձնացնել հետևյալները.

**Էրբ//արբ.**— Պատմական հնչյունափոխութեամբ առաջ եկած տարբերակներ են ես>||էա| և գործածական են արևելահայ բարբառներում: Զուգորդման առաջին եզրը, առանձին վերցրած, արտահայտում է հոգնակիութիւն. Բ չի փոխում բառի քերականական իմաստը, այլ հաղորդում է ինչ-ինչ երանգ, այնպես որ բարբառներում հավասարապես տարածված են դրանց զուգահեռ ձևերը (խօսկէր//խօսկէրբ, շօխկէր//շօխկէրբ, ունբար//ունբարբ, փօխկար//փօխկարբ):

**Անբ//անիբ, էնէնբ//էնիբ.**— Թե՛ բաղադրիչների առաջին եզրերը և թե՛ զուգորդումները, առանձին վերցրած, հավաքականութիւն են արտահայտում, ընդ որում, բարբառներում կիրառելի են դրանց եռանդամ և երկանդամ զուգորդական ձևերը՝ ծիյանբ//ծիյանբբ//ծիյանիբ, ծվանբ//ծվանբբ//ծվանիբ, իծանբ//իծանբ, լիզվէնէ//լիզվէնէբ, կրտվէնի//կրտվէնիբ:

Տարիմաստ բաղադրիչներով զուգորդումներն արտահայտում են և՛ հավաքականութիւն, և՛ հոգնակիութիւն, որը հաճախ պայմանավորում է ոչ միայն զուգորդման կառուցածքը, այլև՝ տվյալ բարբառում գործող թվականաբանութիւն օրենքը: Նման կարգի զուգորդումներից են.

**Արանբ.**— Թեև երեք բաղադրիչներից առաջինն ու վերջինը հոգնակերտներ են, այնուամենայնիվ, ամբողջ զուգորդումը հավաքականներ է կազմում (զյուղարանբ, սրմարանբ, տէղարանբ): Այդ մասնիկը, մասնակի ընդգրկում ունենալով հանդերձ, հաճախական է, այսինքն՝ հանդիպում է և այնպիսի բարբառներում, ուր գոյութիւն չունի ար հոգնակերտը (Արցախ, Գորիս):

**Վրդաբ//վրդիբ, վանբ//վիբ//վօնբ.**— Չնայած ունեն տարբեր կառուցածներ, սակայն քերականական նույն իմաստը կրող միավորներ են, սովորաբար արտահայտում են հավաքականութիւն, առանձին բարբառներում՝ նաև հոգնակիութիւն:

**Դանբ//տանբ, դիւնբ//տիւնբ, դիբ//տիբ.**— Ես խոսքադաձայնի հնչյունափոխված տարբերակները հատուկ են արևմտահայ, իսկ անհնչյունափոխները՝ արևելահայ բարբառներին: Դրանք սովորաբար ունեն հավաքականութեան նշանակութիւն, շնայած բացառված չէ նաև հոգնակիի իմաստով գործածութիւնը՝ օսգրդանբ, ըխտօտանբ, ընգէրդանբ, անէրտիւնբ:

**Օտանբ//օտէլբ//օտիբ.**— Հատուկ է արևելահայ մի քանի բարբառներին (Արցախ, Գորիս, Մեղրի ևն): Սովորաբար հավաքականներ է կազմում անձի հասարակ անուններից՝ թրնօտանբ, հրնգօտանբ, հրնօտանբ//հրնօտիբ,

փրստանք//փրստէք: Հանդիպում են նաև կենդանիների անուններից կազմված առանձին օրինակներ՝ դնօտանք, կիոնօտանք, նիլօտանք//նուլնօտանք:

Թվակազմության վերաբերյալ արված դիտարկումներում միտումնավոր կերպով ընդգրկել ենք բառի ուղիղ ձևը՝ նկատի ունենալով, որ թեք հոլովաձևերում գրաբար-աշխարհաբար հակադրությունը առաջ է բերում ոչ միայն թվի, այլև՝ հոլովական իմաստների տարանջատում: Բերված ոչ ամբողջական փաստերն էլ, սակայն, հնարավորություն են տալիս պարզելու հնից նորին անցման շրջանում կատարված ձևաիմաստային կարևոր փոփոխությունները, նախկինում հաստատված լեզվական օրինաչափությունների վերացման և նորի հաստատման անառարկելի գործընթացը: Դրա լավագույն վկայություններից է, թերևս վանկաքանակությամբ, բաղաձայնահանգ ու ձայնավորահանգ բառերով պայմանավորված հոգնակիի կազմությունը աշխարհաբարում, որը միանգամայն խորթ էր հին հայերենի գրական տարբերակին: Այս ամենից բացի, տեղի է ունեցել մի հիմնավոր տեղաշարժ-տեղափոխություն, որով, կարծես, բնորոշվում են թվակազմության յուրահատուկ դրսևվորումները գրաբար-աշխարհաբար լեզուներում: Այսպես, գրաբարում հոգնակին սովորաբար արտահայտվում էր Ի-ով և նրանով բաղադրված զուգորդումներով. միայն հավաքականության համար մասամբ գործածվում էին եառ, նեառ մասնիկները: Աշխարհաբարում ստեղծվեց հակառակ երևույթը. -եռ, -նեռ վերջավորությունները լիովին հաստատվեցին հոգնակիակազմության մեջ, իսկ հին կազմությունները մնացին իբրև հավաքականակերտներ (բարբառներում՝ մասամբ հոգնակերտներ):

**Б. А. МЕЖУНЦ** — Замечания о процессе числообразования. — При переходе от грабара к ашхарабару подверглись значительным изменениям формы образования множественного числа, что было связано и с характером *ք*-окончания множественности, и с влиянием разговорного языка. Прежде всего, *ք*, будучи согласной, легко сливается с конечной гласной корня, теряет значение независимой грамматической единицы. Об этом свидетельствует множество приобретших единственное и не имевших в прошлом такового слов ашхарабара. Под влиянием разговорного языка активизировались окончания множественного *-եր*, *-ներ*, произошло их закрепление, в разговорном и литературном пластах языка. Благодаря этим и другим факторам в армянском появились параллельные старые и новые формы образования множественности, ограничили сферы применения архаичных форм, стали употребительными новые частицы с новыми правилами и способами сочетания.